| [1] Դուրս գրման ամսաթիվ | | | Հաշիվ ապրանքագիր (ծառայությունների մատուցման, աշխատանքների կատարման) | [2] Սերիա | [3] Համար |
|---|---|---|---|---|---|
| 19 | Մայիս | 2020 թ. | | Բ | 4741972998 |
| [4] Մատուցման ամսաթիվը | | | | | |
| 19 | Մայիս | 2020 թ. | | Ճշգրտվող հաշիվ ապրանքագրի | |
| | | | | Սերիա | Համար |
| | | | | | |
| | | | | Ճշգրտվող հաշիվ ապրանքագրի դուրս գրման ամսաթիվ | |
| | | | | | |

| Պայմանագիր | [5] Կնքման ամսաթիվ | [6] Համար |
|---|---|---|
| | | |

[7] Լրացուցիչ տվյալներ (պայմաններ)

| Ծառայություններ մատուցող (աշխատանքներ կատարող) անձի | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| [8] Հարկ վճարողի հաշվառման համարը (ՀՎՀՀ) | 0 | 0 | 1 | 0 | 6 | 3 | 3 | 7 |
| [9] Անվանումը | ԿՐԹԱՐԱՆ ՍՈՆԱ Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություն (ՍՊԸ) | | | | | | | |
| [10] Բանկային տվյալները | ԱԴԻ Բանկ ՓԲԸ | N 11813000406200 | | | | | | |
| [11] Գտնվելու վայրը (հասցեն) | ԵՐԵՎԱՆ Բաղրամյան 71 16 | | | | | | | |
| [12] Լրացուցիչ տվյալներ | | | | | | | | |

| Ծառայություններ (աշխատանքներ) ստացող անձի | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| [13] Հարկ վճարողի հաշվառման համարը (ՀՎՀՀ) (ֆիզիկական անձի անձնագրի սերիան և համարը) | 0 | 2 | 5 | 0 | 6 | 6 | 3 | 4 |
| [14] Անվանումը | «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԴԱՏԱԽԱԶՈՒԹՅՈՒՆ» Պետական կառավարչական հիմնարկ | | | | | | | |
| [15] Բանկային տվյալները | ՀՀ Ֆին. Նախ. աշխ.գործ. վարչ. | N 900011180081 | | | | | | |
| [16] Գտնվելու վայրը (բնակության վայրը) | ԵՐԵՎԱՆ ԿԵՆՏՐՈՆ ԿԵՆՏՐՈՆ ԹԱՂԱՄԱՍ ՎԱԶԳԵՆ ՍԱՐԳՍՅԱՆ Փ. 5 | | | | | | | |
| [17] Լրացուցիչ տվյալներ | | | | | | | | |

| [18] Ում միջոցով | Անուն, ազգանուն | |
|---|---|---|
| | Լիազորագիր — Համար | |
| | Լիազորագիր — Ամսաթիվ | |

[19] Ծառայությունների մատուցման (աշխատանքների կատարման) ծավալի և վճարման ենթակա գումարի հաշվարկը

| NN Հ/Հ | Ծառայությունների (աշխատանքների) անվանումը (բովանդակությունը) | Չափի միավորը | Ընդհանուր ծավալը կամ ժամանակաշրջանը | Միավորի գինը | Արժեքը |
|---|---|---|---|---|---|
| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 |
| 1 | Թարգմանչական ծառայություն՝ հայերեն - պարսկերեն- հայերեն բանավոր | րոպե | 150 | 50 | 7500 |
| 2 | Թարգմանչական ծառայություն՝ հայերեն - վրացերեն- հայերեն բանավոր | րոպե | 160 | 50 | 8000 |
| Ընդամենը | | | | | 15500 |

Ծառայություն մատուցող (աշխատանք կատարող)՝ HOVHANNISYAN SONA 5808870623

(ստորագրությունը, անունը, ազգանունը)

Ծառայություն (աշխատանք) ստացող՝

(ստորագրությունը, անունը, ազգանունը)

19/05/2020 13:56:07

GRIGORYAN SUSANNA 7403690397

Digitally signed by GRIGORYAN SUSANNA 7403690397
Date: 2020.05.21 15:40:08 GMT+04:00

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

## Թարգմանիչ հրավիրելու մասին

17 ապրիլի 2020թ. քաղաք Երևան

Երևան քաղաքի Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանի դատախազի տեղակալ, արդարադատության առաջին դասի խորհրդական Ա.Գ. Կոստանդյանս, քննարկելով Իսլամական Հանրապետության «Կաշառքի, յուրացման և խարդախության կատարման համար պատժի խստացման մասին» օրենքի 1-ին հոդվածի հատկանիշներով նախատեսված հանցագործության կատարման համար կալանավորված **ՇԱՀՆԱՄ ՀԱՇԵՄԻ ԱՍԳԱՐՓՈՒՐ ԹԱՐԻՆԻ** նկատմամբ խափանման միջոցը փոփոխելու մասին 2020 թվականի ապրիլի 17-ի որոշումը,

## ՊԱՐԶԵՑԻ՝

Իսլամական Իսլամական Հանրապետության «Կաշառքի, յուրացման և խարդախության կատարման համար պատժի խստացման մասին» օրենքի 1-ին հոդվածի հատկանիշներով նախատեսված հանցագործության կատարման համար հանձնման նպատակով կալանավորված **ՇԱՀՆԱՄ ՀԱՇԵՄԻ ԱՍԳԱՐՓՈՒՐ ԹԱՐԻՆԻ** վերաբերյալ 2020 թվականի ապրիլի 17-ի որոշում է կայացվել խափանման միջոց կալանավորումը փոփոխելու և որպես խափանման միջոց ստորագրություն չհեռանալու մասին ընտրելու վերաբերյալ:

Հաշվի առնելով, որ **ՇԱՀՆԱՄ ՀԱՇԵՄԻ ԱՍԳԱՐՓՈՒՐ ԹԱՐԻՆ** չի տիրապետում քրեական դատավարության լեզվին, իսկ Էմմա Մանուկյանը համապատասխան կրթություն և փորձ ունեցող անձ է, որն իր մասնագիտական գործունեության ընթացքում թարգմանչական գործառույթներ է իրականացնում, և որի ձեռնհասությունը կասկած չի հարուցում, որպիսի պայմանները համապատասխանում են ՀՀ վճռաբեկ դատականի 2017 թվականի մայիսի 4-ի թիվ ՎԲ-72/07 որոշմամբ արտահայտած իրավական դիրքորոշումներին, ղեկավարվելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 15-րդ, 83-րդ հոդվածներով,

## Ո Ր Ո Շ Ե Ց Ի՝

1. **ՇԱՀՆԱՄ ՀԱՇԵՄԻ ԱՍԳԱՐՓՈՒՐ ԹԱՐԻՆԻՆ** նկատմամբ հանձնելու նպատակով կալանավորելու վերաբերյալ միջնորդության պարսկերեն բանավոր թարգմանությունն ապահովելու նպատակով որպես թարգմանիչ հրավիրել Էմմա Մանուկյանին (նույնականացման քարտ՝ 000312256, տրված 30. 05. 2013թ. , 005-ի կողմից, ՀՀ ԱՆ տեղեկանք, տրված 25. 12. 2018թ. ) և նրան ծանոթացնել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 83-րդ հոդվածով նախատեսված իր իրավունքների և պարտականությունների հետ:

2. Թարգմանչին նախազգուշացնել, որ ՀՀ քրեական օրենսգրքի 338-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ քրեական գործով թարգմանչի կողմից ակնհայտ սխալ թարգմանություն կատարելը պատժվում է տուգանքով՝ նվազագույն աշխատավարձի հարյուրապատիկից երեքհարյուրապատիկի չափով, կամ կալանքով՝ առավելագույնը երկու ամիս ժամկետով, կամ ազատազրկմամբ՝ առավելագույնը երկու տարի ժամկետով:

**Վարչական շրջանի դատախազի**
**տեղակալ, արդարադատության**
**առաջին դասի խորհրդական** **Ա. Կոստանդյան**

*Ստացա սույն որոշման օրինակը, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 83-րդ և ՀՀ քրեական օրենսգրքի 338-րդ հոդվածների քաղվածքները: Իմ իրավունքներն և պարտականությունները ինձ պարզ են և հասկանալի, ՀՀ քրեական օրենսգրքի 338-րդ հոդվածով նախատեսված պատասխանատվության մասին նախազգուշացված եմ:*

**Թարգմանիչ՝** «...17...».....04..... 2022թ.

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

## Թարգմանիչ հրավիրելու մասին

20 ապրիլի 2020թ. քաղաք Երևան

Երևան քաղաքի Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանի դատախազի տեղակալ, արդարադատության առաջին դասի խորհրդական Ա.Գ. Կոստանդյանս, քննարկելով ՀՀ տարածքից դուրս հանցագործություն կատարած և ՀՀ տարածքում ձերբակալված, Վրաստանի քաղաքացի Գաբրիել Արաբիձեի նկատմամբ ժամանակավոր կալանավորում կիրառելու վերաբերյալ 2020 թվականի ապրիլի 20-ին Երևան քաղաքի ընդհանուր իրավասության դատարան ներկայացրած միջնորդությունը,

## ՊԱՐԶԵՑԻ՝

Հայաստանի Հանրապետության (այսուհետ՝ ՀՀ) ոստիկանության Երևան քաղաքի վարչության «Զվարթնոց» օդանավակայանի գծային բաժնի քրեական հետախուզության բաժանմունքի աշխատակիցների կողմից ձեռնարկված օպերատիվ-հետախուզական միջոցառումների արդյունքում, 2020 թվականի ապրիլի 18-ին, Մինսկ-Երևան թիվ 733 չվերթի ժամանումից հետո, հայտնաբերվել և ժամը 06$^{00}$-ին, բաժին է բերման ենթարկվել Նորվեգիայի Թագավորության (այսուհետ՝ ՆԹ) ոստիկանության «Ինտերպոլ» ազգային կենտրոնական բյուրոյի միջոցով, այդ երկրի քրեական օրենսգրքի 321-րդ, 322-րդ և 15-րդ հոդվածների մեղադրանքով (կողոպուտ 18 դրվագ և կողոպուտի փորձ 2 դրվագ), 2019 թվականի մարտի 25-ից հետախուզման մեջ գտնվող, Վրաստանի Հանրապետության քաղաքացի Գաբրիել Արաբիձեն, ով նույն օրը՝ ժամը 08$^{45}$-ին, ձերբակալվել է:

ՀՀ ոստիկանության Երևան քաղաքի վարչության «Զվարթնոց» օդանավակայանի գծային բաժնի 2019 թվականի հոկտեմբերի 12-ի №15-1877 գրությամբ Երևան քաղաքի Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանի դատախազություն է ստացվել **ՇԱՀՆԱՄ ՀԱՇԵՄԻ ԱՍԳԱՐՓՈՒՐ ԹԱՐԻՆԻ** ձերբակալման մասին փաստաթղթերի փաթեթը:

2020 թվականի ապրիլի 20-ին միջնորդություն է ներկայացվել Երևան քաղաքի ընդհանուր իրավասության դատարան՝ Վրաստանի քաղաքացի Գաբրիել Արաբիձեի նկատմամբ ժամանակավոր կալանավորում կիրառելու վերաբերյալ :

Հաշվի առնելով, որ Գաբրիել Արաբիձեն չի տիրապետում քրեական դատավարության լեզվին, իսկ Ռինա Շագինյանը համապատասխան կրթություն և փորձ ունեցող անձ է, որն իր մասնագիտական գործունեության ընթացքում թարգմանչական գործառույթներ է իրականացնում, և որի ձեռնհասությունը կասկած չի հարուցում, որպիսի պայմանները համապատասխանում են ՀՀ վճռաբեկ դատարանի 2017 թվականի մայիսի 4-ի թիվ ՎԲ-72/07 որոշմամբ արտահայտած

իրավական դիրքորոշումներին, ղեկավարվելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 15-րդ, 83-րդ հոդվածներով,

## ՈՐՈՇԵՑԻ՝

1. Գաբրիել Արաբիձեի նկատմամբ ժամանակավոր կալանավորում կիրառելու վերաբերյալ Երևան քաղաքի ընդհանուր իրավասություն դատարան ներկայացված միջնորդության վրացերեն լեզվի բանավոր թարգմանություն ապահովելու նպատակով որպես թարգմանիչ հրավիրել Ռինա Շագինյանին (նույնականացման քարտ՝ 010103315, տրված 12. 12. 2017թ., 011-ի կողմից, դիպլոմ ԴՈՒ սերիայի թիվ 004036) և նրան ծանոթացնել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 83-րդ հոդվածով նախատեսված իր իրավունքների և պարտականությունների հետ:
2. Թարգմանչին նախազգուշացնել, որ ՀՀ քրեական օրենսգրքի 338-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ քրեական գործով թարգմանչի կողմից ակնհայտ սխալ թարգմանություն կատարելը պատժվում է տուգանքով՝ նվազագույն աշխատավարձի հարյուրապատիկից երեքհարյուրապատիկի չափով, կամ կալանքով՝ առավելագույնը երկու ամիս ժամկետով, կամ ազատազրկմամբ՝ առավելագույնը երկու տարի ժամկետով:

**Վարչական շրջանի դատախազի**
**տեղակալ, արդարադատության**
**առաջին դասի խորհրդական** **Ա. Կոստանդյան**

*Ստացա սույն որոշման օրինակը, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 83-րդ և ՀՀ քրեական օրենսգրքի 338-րդ հոդվածների քաղվածքները: Իմ իրավունքներն և պարտականությունները ինձ պարզ են և հասկանալի, ՀՀ քրեական օրենսգրքի 338-րդ հոդվածով նախատեսված պատասխանատվության մասին նախազգուշացված եմ:*

Թարգմանիչ՝ «..22.....» .....04..... 2020թ